

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԻ
ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ԱՂԶՆԻՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(XIX դարի երկրորդ կես—XX դարի սկիզբ)

Դ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Արևմտյան Հայաստանում ֆեոդալական կարգերի հարատևման հետևանքով ազգակցական և համայնքային հարաբերություններում պահպանվում էին տոհմային մի շարք սովորությունների մնացուկներ: Աշխատանքային կոլեկտիվիզմը, փոխօգնության ավանդական ձևերը, հասարակական գործերի համատեղ որոշման սովորությունները, արտադրության որոշ միջոցների և հողային ընդհանուր սեփականությունն օգտագործելու ձևերը և այլն հանդիսանում էին ազգի և համայնքի հարաբերությունների ամենաբնորոշ կողմերը:


Աղձնիքում*, ինչպես լեռնային, այնպես էլ հարթավայրային շրջաններում, պահպանվում էին աշխատանքի նախնական կոոպերացիայի բազմաթիվ մնացուկներ. հայ գյուղացիական ընտանիքներն աշխատավոր ձեռքերի և արտադրամիջոցների համախմբում էին կատարում: Աշխատանքային այդ կոոպերացիաները XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին կազմակերպվում էին ազգակցական և համայնքային փոխօգնության կարգով: Դա առանձնապես դրսևորվում էր շինարարական դժվարին աշխատանքների, անտառահատական և բրիչային երկրագործության, արտերը պարարտացնելու, արորավորի, քաղհանի, հնձի, կալսման, սննդանյութերի վերամշակման, անասնակերի հավաքման ու ձմեռանոց տեղափոխելու, տարերային աղետների՝ ձնահյուսքի, հրդեհների հետևանքների վերացման, փլուզումների վերականգնման և այլ դեպքերում:

Շինարարական բնագավառ.—Աղձնիքում բնակարանային շինարարությունը՝ հիմք փորելը, շինանյութերն անտառից և դաշտից տեղ հասցնելը, պատերը շարելն ու տները ծածկելը և հողանք կատարելն արվում էր համայնքի լայն աշակցությամբ: Փոխադարձ օգնության այդ ձևը, որ իրագործվում էր երիտասարդների և տղամարդկանց միջոցով, դրամական հատուցում չէր ենթադրում: Այն հայտնի էր զուպարա անունով՝ փոխօգնություն, հարակից նշանակություններ Շինարարական նյութերի, հատկապես անտառանյութի տեղափոխումը բնակարանաշինության ամենադժվարին աշխատանքն էր համարվում: Այդ տեսակետից ուշագրավ է ծածկի ժամանակ կիրառվող «մարթակի դուբարան» (Աղնվաջձոր գավառ) կամ «գերան բերել» կոչված դուբարան (Սասուն): Աղձնիքում, հատկապես նրա լեռնային շրջաններում, տները իրիստ ամուր էին

* Աղձնիքը պատմական Հայաստանի այն տարածքն է, որը XIX դարի վերջին իր հարակից շրջաններով մտնում էր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներից երկուսի՝ Դիարբեքլիի և Բաղեշի մեջ:

Հողվածի նյութերը գրի են առնվել մեր կողմից Թայինի, Աշտարակի, Լջմիածնի, Մասիսի և Արարատի շրջաններում հաստատված աղձնիքայիններից, 1972—76 թթ.՝ Երեվանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոնի կազմակերպած ազգագրական գիտաբանական ժամանակ: Այս հարցին այս կամ այն առթիվով անդրադարձել են՝ Ս. Իլիազարյանը, (Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1, Сельская община, Казань, 1869), Գր. Վանցյանը (Հուլիանյութեր հայ համայնքի ուսումնասիրության, «Մուրճ» 1896, № 1), Լ. Խաչիկյանը (14—15-րդ դարերի հայկական գյուղական համայնքի մասին, «ԳՐՀ», 1958, № 1), Է. Կարապետյանը (Родственная группа «азг» у армян, Ереван, 1958), Վ. Բոդյանը (Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, Տեղափոխման մոտաջված ձևեր, «Լրաբեր հաս. գիտ.» 1972, № 10):

կառուցվում. տանիքի վրա լցվում էր 80—100 սմ հաստությամբ հող, որպեսզի կտորները դիմանային հաստ շերտով նստող ձյանը և նրանց վրա կալսոցին՝ կոռիով կալ անելուն: Այդպիսի գերդաստանական տներում երբեմն ապրում էին 30—80 անձեր: Ուստի անհրաժեշտ էին հաստ պատեր և հսկա գերաններ, որոնց տեղափոխումը և շենքի վրա բարձրացնելը պահանջում էր 50—60 տղամարդու ծանր աշխատանք: Գերանները լեռնային տեղանքում տեղափոխվում էին զուտ մարդկանց ուժերով, հարթություններում՝ լծկանով: Ամեն մի գերանի տեղափոխման համար պահանջվում էր անվազն 16 հոգի: Վ. Պետոյանը նշում է, որ այդ աշխատանքը սոսկում է ազդում գերանների ծանրության և դժվարաշարժության պատճառով: Մեծ հետաքրքրություն էր առաջացնում սարերի թեք կողերով, նեղ ու ծուռ ճամփաներով այդ գերանները 50—60 մարդկանց ուսերով տեղ հասցնելը: Երբեմն գերանատարությանը մասնակ-




Գերանատարության ավանդական ձևերից մեկը Աղձնիքում:

ցում էին շինարարության տերերի ազգակից հեղինակավոր կանայք, որոնց ներկայությունը ոգևորելու և ուժ հաղորդելու նպատակն էր հետապնդում: Քալինի շրջանի Իրինդ գյուղում բրնակվող 82-ամյա բանասաց Ա. Հարությունյանի հավաստմամբ, Մեմալ գյուղացի Քոթանի տունը ծածկելիս գերանատարության համար հավաքվել էին մոտ 60 հոգի: Այդ ժամանակ որոշ տղամարդկանց թուլամորթությունը խարդաղանվում էր Քոթանի եղբոր կնոջ՝ գյուղում հեղինակություն վայելող Ռեհանի մասնակցությամբ³:

Ազնվացձորի Կարբ և Սազ գյուղերում մարթալի զուբարայի ժամանակ համայնքից յուրաքանչյուր տուն տրամադրում էր մեկ տղամարդ՝ 1 զուլգ եղներով և իր լծասարքով: Լծկանազուրկ տնտեսության օգնությունը պարտադիր էր դառնում հողանքին՝ իրենց ֆրոնցներով: Զուբարային մասնակցողների թիվը հատկապես մեծ էր լինում հողանքի օրը, հասնելով 40—50 և ավել հոգու: Այսպես, օրինակ՝ Գելիեգուզան գյուղացի Արշակ Առաքելյանի հավաստմամբ՝ նախքան եղեռնը իրենց գյուղում Մարտիրոսի Առաքելի (Լոբոյի) գոմի հողանքին հավաքվել էին 70 հոգի⁵, իսկ Ազնվացձոր գավառի Սազ գյուղացի Խաչատուր Ներսիսյանի հավաստմամբ՝ Սազ գյուղում՝ 50 քթոցավոր: Այդ նույն շրջանի Կարբ գյուղում հողանքին հավաքվում էին շինարարության տիրոջ տանը իրենց կողովներով և թիակներով՝ յուրաքանչյուր տնից մեկ աշխատավոր⁶: Նրանք բաժանվում էին առանձին խմբերի, որոնցից մեկը հող էր փորում և կողովները լցնում, երկրորդը կողովներով հողը կտուրն էր բարձրացնում, երրորդը թիեքով ներսից ու դրսից հողը կտուրն էր նետում և չորրորդը հարձակում էր կտուրը տեղափոխած հողը: Շալակողները և հողը ասնողներով կտուրը բարձրացնողները երիտասարդներն ու պատանիներն էին, հողը լցնողները՝ տղամարդիկ և կտուրը հարդարողները՝ հասակավորները: Աշխատանքի ընթացքում հանգստանալու նպատակով աշխատանքային զերերը փոխում էին: Աշխատանքի այս բաժանումն ավանդական բնույթ ունեւր ոչ միայն Աղձնիքում, այլև ողջ Հայաստանում:

Զուբարա հրավիրողը շինարարության տերն էր. յուրաքանչյուր տուն, ըստ բարոյական նորմերի և սովորութային իրավունքի, մի աշխատավոր էր տրամադրում, իսկ ազգականները՝ մեկից ավելի: Ըստ տրում, հիմքը փորելու, պատերը շարելու աշխատանքներին մասնակցում էին առանձնապես ազգականները: Համայնքային այդ փոխօգնությունը դեռ այսօր էլ շարունակվում է կիրառվել Քալինի և Աշտարակի՝ աստույցիներով բնակեցված գյուղերում:



Քարատարության ավանդական ձևերից մեկը Ադձնիքում:

Համայնքի օգնությունն անխնայաբար էր ջրաղացի և ձիթահանքի քարերի տեղափոխման ժամանակ: Տեղափոխումը կատարվում էր գլորելով, ուսելով, բալխիրներով քաշելով և «ճախարակ» կոչվող սարվածքի միջոցով: Սասունում պահպանվել էր գլորման եղանակով տեղափոխման ամենանախնական ձևերից մեկը. ջրաղացի քարի կենտրոնում բացված անցքով անցկացնում էին ռոտ (սոնի) այնպիսի երկարությամբ, որ յուրաքանչյուր կողմից հրեին կամ թեթություններում զսպեին 5—6 մարդ: Ռոտի երկու կողմերից կապված պարանից էլ ձգում էին մի քանի տղամարդ⁸: Իսկ Ե. Կարապետյանի վկայությամբ՝ Սասունում «Ջրաղացի քարերի փոխադրման գործին փոխօգնության կարգով, մասնակցում էր ամբողջ գյուղը՝ մարդկանցով և քաշող ուժով՝ 40 մարդ և 20 զույգ եղ իրենց լծասարքերով և երկաթե շղթաներով»⁹: Ազնըվացձոր գավառում ջրաղացի և ձիթահանքի քարերի տեղափոխմանը մասնակցում էին 40—50 հոգի: Նրանք ջրաղացի քարերի մեծությունը համապատասխան սարքում էին բալխիր, որի վրա քարը կապում էին շղթաներով խաշուփաք ձևով: Գավառի քրդական Շիբբան գյուղից, որտեղ քարի հանք կար, 20 կմ հեռավորության վրա գտնվող Սազ գյուղ տեղափոխելու ժամանակ հարթություններում բալխիրներին լծում էին մեկ զույգ գոմեշ և 5 զույգ եղ, իսկ դժվարամատչելի տեղերում՝ քարը ուսելով տեղափոխման ժամանակ, համաձայն բանասաց Ե. Ներսիսյանի՝ տեղափոխումը գրեթե 50 հոգով էր կատարվում¹⁰: Նշված բոլոր դեպքերում պահպանվում էր ազգակիցների համախմբումը, եթե այն չէր բավարարում, ստացվում էր համայնքի լայն աջակցությունը: Խմբակային այս աշխատանքն ուղեկցվում էր վճարճությամբ, իսկ վերջում կերակրվում էին ջրաղացի տիրոջ հաշվին:

Համանման կոոպերատիվ աշխատանքներ էին պահանջում հասարակական նշանակություն ունեցող բաղմամբիվ կառուցումները և կառուցապատումները՝ եկեղեցի, ճանապարհ, հասարակական օդահանրանոցներ, կալեր, առուներ շինելն ու վերանորոգելը: Ցուրաքանչյուր տուն պարտավորվում էր տրամադրել մեկ կամ մեկից ավելի աշխատավոր:

Երկրագործական բնագավառ.— Երկրագործությունը այստեղ ևս տնտեսության առաջատար ճյուղն է հանդիսացել, որն անցյալում արտադրական միջոցների և աշխատավոր ձեռքերի միավորման կարիքն ուներ: Իհարկե, այդպիսի աշխատատար տնտեսության վարումը անցյալում ավելի հեշտ էր իրագործել նահապետական մեծ ընտանիքների կողմից: Միայն գերդաստանական տներն էին, որոնք ապահովված էին աշխատանքի գործիքներով, լծկան անասուններով, բավարար թվով աշխատուժով և պատահական չէ, որ մեծ ընտանիքների տնտեսական առավելությունը խաղում էր վճռական դեր երկրագործական աշխատանքների հաջող կատարման համար: Այդ է պատճառը, որ կողեկտիվ աշխատանքի տվյալ ինստիտուտի առաջանալը հիմնականում կապում են դերդաստանների քայքայման հետ¹¹:

Երկրագործական աշխատանքների ժամանակ փոքր ընտանիքները համախմբվում էին ոչ միայն 19—20-րդ դարերում, այլև միջնադարում¹²:

Ադձնիքի լեռնային սակավահող շրջաններում նոր հող յուրացնելու նպատակով օգտագործում էին անտառահատման համակարգը և այդ նույն սակավահողության պատճառով լան-

ջային տեղանքներում ստեղծվում էին դարավանդային արտեր¹³։ Ինչպես հավաստում են Վ. Պետրյանը, Ե. Կարապետյանը և մեր դաշտային նյութերը, վարուցանքի ժամանակ եզները բաղել էին անում, այսինքն՝ մի-մի եզ ունեցող ազգակից տնտեսությունները համախմբում էին իրենց քառող ուժերը, կազմում էին մեկ կամ մի քանի լուծ¹⁴։ Մասունի և Ազնվացձոր գավառի գյուղերում վարուցանքի ժամանակ ազգակիցները միավորելով իրենց լծկան անասունները կազմակերպում էին ցանձախ զուբաբ¹⁵։ Նման դեպքերում մերձավոր ազգականները համախմբված ձևով, հերթականությամբ կատարում էին վարն ու ցանքը։ Վարն սկսվում էր ազգանրամի՝ ձյունից առաջինն աղատված արևահայաց հողից, որպեսզի հողը քեչից դուրս լինկներ։

Աղձնիքի հովտային շրջաններում՝ Արզն (խարզան), Նիփկերտ (Սիլվան) աշնանացան ցորենի մշակություն ժամանակ հողը հերկում էին երկու անգամ՝ կրկնավարի նպատակով, իսկ բուստանային կուլտուրաների համար՝ 4—5 անգամ։ Ընդ որում, բոլոր դեպքերում վարը կատարվում էր խալածե։ Օրվա ընթացքում երկու հերթով, իսկ երկար օրերին՝ երեք։ Այստեղ աշնանացանի ժամանակ 5 և ավելի տնտեսություն, յուրաքանչյուր տնից մի աշխատավոր իր լծկանով միավորվում և օգնության էր գնում այն հարևանին, որի աշնանացանը ուշացվում էր։ Աղձնիքի Ամատինա շրջանի Գալճուկ գյուղացի Հ. Մերչիկյանը հավաստում է, որ իրենց գյուղում որևէ ազգանգամ ընտանիքում եթե պակասեր լծկան անասունը, նրա համար եզ գնելու նպատակով ազգակից ընտանիքներից դրամ էր հավաքվում։ Եթե ազգակիցները դժվարանում էին կազմակերպել նյութական այդ օգնությունը, իրենց հողամասերի հետ վարում և ցանում էին նաև նրա արտերը¹⁶։

Աղձնիքում հողը հերկվել է արորով, 1—2 զույգ լծկանով¹⁷, որտեղ գութանի բացակայությամբ էր պայմանավորված այնպիսի հարակաշությունների կազմակերպման անհնարինությունը, որոնք կիրառելի էին Վասպուրականում և Արևելյան Հայաստանում։

Այստեղ կոլեկտիվ աշխատանքը երևում էր նաև սերմաներու ժամանակ, երբ ազգակից սակավ աշխատավոր ձեռքեր ունեցողի տան ցորենի հորը առաջինն էր բացվում և զտվում ու տեղափոխվում արտերը։

Սասունում զլզլի և գավարսի բերքահավաքի ժամանակ հրավիրվում էին աղզի ջահել աղջիկներն ու հարսները, որոնք էլ առանց վարձատրվելու, կոլեկտիվ կատարում էին հունձը։ Աշխատանքն տեղեկցվում էր աշխույժ երգերով և ավարտվում առատ հյուրասիրությամբ։ Ղուբին և շրջակա այլ գյուղերում ցորենի հունձը կատարվում էր հարակաշի կարգով, առանց վարձատրության, հերթականությամբ, երբ օգնության էին գալիս ինչպես ազգակիցները, այնպես էլ ոչ ազգակից հարևաններ¹⁸։ Համանման միավորում պահանջվում էր կալսման ժամանակ, որը Աղձնիքի գրեթե ողջ տարածքում կատարվում էր եզներով տրորելու եղանակով, որը Սասունում հայտնի էր կոռի, իսկ նրա հարավային շրջաններում՝ գելա անունով¹⁹։ Այստեղ ազգական-հարևանները միավորում էին իրենց լծկան անասունները և հերթականությամբ կատարում կալոցը։ Գալճուկ և նրա շրջակա մյուս բոլոր գյուղերում կալնելու և մաղելու աշխատանքները կատարվում էին կոլեկտիվ ջանքերով, 1—2 գիշերվա ընթացքում։ Ընդ որում, երևելու աշխատանքը կատարվում էր միայն տղամարդկանց կողմից, որոնք մեկի կալի գործն ավարտելու պես անցնում էին հաջորդի կալը, որից հետո կանաչ մաղում էին, իսկ երիտասարդները շալակով ցորենը տեղափոխում տները։ Գործն ավարտելուց առաջ և ավարտին աշխատավորները հյուրասիրվում էին։ Այս աշխատանքը հայտնի էր կալը քամին տալ անունով²⁰։ Համախմբվածության այս ձևը մասամբ պայմանավորված էր նաև գյուղական բնակավայրերի փոքրությունով։ Այդպիսի խմբական աշխատանքներ կատարվում էին նաև էրիշտա կտրելու, ցորենը մաղելու, ձավար ձեծելու, աղալու, այգեկութին մասնակցելու, տհալ, քաղցրեղեն պատրաստելու գործում²¹։ Աղձնիքի հովտային շրջաններում տներն իրար կից էին, տանիքները՝ կպած։ Այդ պատճառով էլ այդ շրջաններում էրիշտան կտրում էին տանիքների վրա, որը մինչև եղեռնն ու արտագաղթը կատարվում էր ազգակիցների և հարևանների մասնակցությամբ։ Խմորը հունցողը տանտիկինն էր, իսկ լավաշը բանալու, կտրելու և թել-թել անելու աշխատանքները կատարվում էին հրավիրված կանանց կողմից։ Էրիշտա կտրող տանտիրուհին երբեմն խմորի գնդեր էր ուղարկում հարևանությամբ ապրող հարսներին ու աղջիկներին՝ այդ նույն նպատակով։ 15—20 հոգի հավաքվում էին նրա տանը։ Կատարվում էր աշխատանքի բաժանում՝ 2—4 հոգի գրող-նակում էին, 4—8-ը՝ ձեռքում՝ բարակացնում, 2—4 հոգի փումում, 2—4 հոգի էլ կտրում։ Վերջին գունդը կտրելիս, կտրողը տանտիկնոջը հայտնում էր, թե «գանակը չի կտրում»։ Դա խորհրդանշան էր աշխատանքի ավարտը՝ և հյուրասիրվելու պահանջը։ Այդ աշխատանքը կատարվում էր հերթականությամբ, որպիսի սովորությունը մինչև 50-ական թվականները պահպանվում էր Քալինի և Աշտարակի սասունցիներով բնակեցված գյուղերում²²։

Ուշագրավ է բլրուրը կոելկտիվ կարգով ծեծելու սովորությունը Ղուբին գյուղում: Յուրաքանչյուր ընտանիք ծեծում էր 1 քիլա (20 կոտ), իսկ ունևոր ընտանիքները՝ ավելին: Ընդ տրում, բլրուր պատրաստելու աշխատանքը համայնքում կատարվում էր հերթականությամբ: Պղինձ ունեցող տնտեսություններն իրենց պղինձները դնում էին թաղի հրապարակում՝ նաև մյուսների կողմից օգտագործելու համար: 10—15 պղինձներում, հերթականությամբ, յուրաքանչյուր օրը մեկ ընտանիքի համար կոելկտիվ կարգով խաշում էին ցորենը և շորացնելուց հետո ծեծում: Ծեծելը կատարվում էր սանդում, թաղի երիտասարդների կողմից, առանց հրավերի: Սա նաև հարևանացու և փեսացու ընտրելու լավ միջոց էր, ուր դիտվում էր կողմերի աշխատասիրությունը, նրանց ֆիզիկական տվյալները, կորովիությունը:

Սասունի Բերմ, Գելիեզուզան և մյուս գյուղերում նույնպես սանդով և վարսանդով ազգի տղամարդիկ կամ երբեմն էլ կանաչք խմբով երկանքով բլրուր քաշելու կամ սանդով կորկոտ ծեծելու սովորություն ունեին: Նախապես ղզուշացվում և հավաքվում էին 4—12 հոգի և շորսական հոգով խաշած ծեծում, որին ուղեկցում էր աշխատանքային սիթմիկ երգը²³: Այս սովորությունը սասունցիների մեջ պահպանվում էր մինչև վերջերս: Համանման սովորությունը պահպանվում էր նաև Հայաստանի այլ շրջաններում²⁴:

Համայնքային օգնությունը մեծ ծավալ էր բնդունում հատկապես բամբակաքաղի ժամանակ, բայց վարձատրության սկզբունքով: Այստեղ, հակառակ Արարատյան հովտի, բամբակամշակության ամբողջ ընթացքը կատարվում էր տղամարդկանց, իսկ բամբակաքաղը՝ միայն կանանց ձեռքով: Նախապես հրավիրված յուրաքանչյուր տնտեսությունից բամբակաքաղին մասնակցում էր 1—2 հոգի, նույնիսկ կրծքի երեխաներով մայրերը: Ղուբին գյուղում վարձը կազմում էր հավաքած բամբակի 1/14, իսկ Գալհուկում՝ 1/8 մասը: Աշխատանքին մասնակցում էին մինչև 200 հոգի: Այս դեպքում հյուրասիրությունը բացառվում էր²⁵:

Կոելկտիվ փոխօգնությունից սովորություններից էր նաև Աղձնիքի լեռնային շրջաններում կիրառվող քավի զուբարան: Այստեղ ինչպես հողը, այնպես էլ անտառամասերի մեծ մասը գյուղական համայնքում դարձել էր մասնավոր սեփականություն: Սեփականացված անտառամասը կուշում էր սաթառ կամ հաղն, որի ծառերի տերևները 3—4 տարին մեկ անգամ կտրում էին՝ երիտասարդացնելու նպատակով: Իսկ ուշարի կերի համար ամեն տարի կտրում էին որոշակի հատվածի տերևակալած ճյուղերը: Հավաքման և տեղափոխման աշխատանքները կատարվում էին ազգակցական և համայնքային փոխօգնությամբ: Այդ աշխատանքներին մասնակցում էին 20-ից մինչև 150 և նույնիսկ ավելի մարդ: Գելիեզուզան գյուղում 1892 թ. Պետոցի տան դիվը (տերևը) կտրելու համար 7 գյուղից 240 մարդ էր հավաքվել: Այդ օրը նրանց համար մորթվել է 4 տավար և 10 ուշար²⁶: Զուբարան կազմակերպվում էր շաբաթ օրը: Հրավիրվող աշխատավորների թվին համապատասխան կազմակերպել սննդի գործը: Աշխատանքն ավարտվում էր լուսադեմին: Ամենից շուտ աշխատավոր հասնողը և առաջինը օձ բացողը կոչվում էր օնվոք, նրանից հետո եկողը, որը պարտավոր էր աշխատանքն սկսել անտառամասի մյուս ծայրից. կոչվում էր պոչվոք: Օնվոքի և պոչվորի միջև ընկած հնձվորների հետավորությունը միմյանցից երկուական քայլ էր կազմում: Աշխատանքի արագությունը պայմանավորված էր օնվորից և պոչվորից, որոնց միջև ծավալվում էր աշխատանքային մրցություն. օնվորը ձգտում էր միշտ առաջինը լինել, իսկ պոչվորը զրոյում էր իրենից առաջ եղողներին՝ մղվել առաջ: Դրա համար աշխատանքի վերջում նրանց տրվում էր կատակի բնույթ ունեցող նվեր՝ օնվորին ուշարի կուրծքը, իսկ պոչվորին՝ պոչիկը:

4. Մարքսը համայնքային փոխօգնություն կապակցությամբ նշում է, որ նման նախնական պարզ կոոպերացիաները նպաստում էին ծավալելու նախ անհատական և ապա կոելկտիվ մրցությունը, երբ «հասարակական կոնտակտն ինքն արդեն առաջ է բերում մրցակցություն և կենսական եռանդի (animal spirits) յուրահաստուկ բարձրացում, որն ուժեղացնում է առանձին անձների անհատական գործունակությունը»²⁷:

Կտրված անասնակերի հավաքումն ու դիզումը կատարվում էր առանձին խմբերի կողմից. յուրաքանչյուր 10 կտորղին հարկավոր էր երկու հոգի խուրձ անող, երկու հոգի ուռնուց կապիռի ճյուղ կտրող և մեկ հանգուցող: Առանձին խումբ էին կազմում աշխատավորներից շուր մատակերարողները և կերակուր պատրաստողները, որոնք ղեկավարվում էին զուբարայի տիրոջ կողմից, իսկ աշխատանքը՝ հատուկ նշանակված լիազորների կողմից: Օրվա ընթացքում կերակրվում էին երեք անգամ՝ ագրադիեն, նաշին և հրեթրիֆին: Թավ կտրելը համընկնում էր սարվոր անասնապահների սաթառների մոտ իջնելուն, որով նրանք ևս միավորվում էին: Դա դուրացնում էր աշխատանքի կաղմակերպումը և սննդի հայթայթումը: Ընդ որում, շքավոր ազգանդամ կամ հարևան ընտանիքների համար կաղմակերպված զուբարանների ժամա-

նակ աշխատավորները պարտավորվում էին ինքնասպասարկմամբ ապահովել իրենց սնունդը:

Զուրբարայով քաղված ու դիզված թավը տեղափոխվում էր ձմռանը, դարձյալ կոլեկտիվ կարգով, որովհետև լեռնային ճանապարհներում անհնարին էր գրաստի կամ լծկանի օգտագործումը: Զմռանը ճանապարհի հարթեցման աշխատանքներին հիմնականում մասնակցում էին մերձավոր ազգականները: Հաճախ դաժան սառնամանիքների և բքի պայմաններում տեղափոխումը կատարվում էր ձյան վրայով, քարշաձողի վրա բարձրով ու քաջան անելով և դաճուգ կոշիկով հատուկ սահնակներով: Զուրբարավորները հագնում էին վաճաղական լականները՝ ձյան վրա ազատ քալելու նպատակով: Այդ մասին համառոտ նկարագրություն է թողել Թ. Արծրունին²⁸: Հրավիրված աշխատավորները լուսադեմին բարձրանում էին տվյալ սաթառը: Բոլոր զուրբարավորները բաժանվում էին առանձին դուշգրի՝ թավը բարձելու, դահուգների ընթացքը դասելու կամ ձգելու և ընթացքում անվտանգությունն ապահովելու նպատակով: Աշխատանքն սկսելով լուսադեմից առաջ, մինչև ուշ երեկո, 3—4 երթ ու դարձով ավարտվում էր թավի տեղափոխումը: Այս դեպքում նույնպես աշխատավորները կերակրվում էին գործատիրոջ հաշվին²⁹:

Քուրդ բեկերի, հայ մեծահարուստ տների և վանքերի կողմից շարաշահվում էին այս համայնքային փոխօգնության սովորությունները: Տարեկան նրանց համար կիրառվում էր մի քանի զուբարա, որը աշխատավորության կատարյալ շահագրծում էր: Այդ էր պատճառը, որ քուրդ բեկերի զուբարաների օրերին կեղծ գործերով խույս տալով շատերը հեռանում էին լեռները և վերադառնում այդ հարկադրական աշխատանքներն ավարտելուց հետո: Այդ շարաշահումն իր արտացոլումն էր գտել բանահյուսության մեջ, որից բանասաց նաչատուր Ներսիսյանը հիշեց հետևյալ տողերը.

Աստված քանդա Գյուզալդարեն,
Շաբաթ օր չի դա թավի սարեն,
Կիրակի օր երթա քրդու զուբարեն³⁰:

Նույնանման հարկադրական զուբարաներ կատարվում էին նաև հարևան վասպուրականում³¹:

Ազգակցական և համայնքային փոխօգնության մի շարք ձևեր վերապրուկային տեսքով գոյատևեցին նաև եղեռնից հետո՝ Սովետական Հայաստանում: Եղեռնից մազապուրծ եղած ազգակիցները համախմբվում և փոքր խմբերով համատեղ ժամանակավոր տնտեսություններ էին հիմնում: Դրանք երբեմնի խոշոր գերդաստանները հիշեցնող տնտեսություններ էին, որոնց հիմքում ընկած էր մերձավոր ազգանդամների՝ միմյանց տնտեսական, արտադրական և բարոյական կապերն ապահովելու նպատակը: Սովետական Հայաստան տեղափոխվելու սկզբնական տարիներին անհրաժեշտ անատուններով և գործիքներով ապահոված շինելով՝ ազգակից մի շարք տնտեսություններ միացնում էին իրենց մեկական եզները և արտադրամիջոցներն ու հերթով կատարում վարուցանքը, կախումը: Թախիճի և Աշտարակի սասունցիները բնակարանաշինության, այգեթաղի, այգեկութի, բերքահավաքի աշխատանքներում պահպանում էին կոլեկտիվ փոխօգնությունը, որն այժմ կատակով հացփոր են անվանում: Այդ նշանակում է, թե դրամական հատուցում չպահանջող աշխատավորներին պարտավոր են ըստ պատշաճի չչորասիրել³²:

Արտադրողական ուժերի ցածր աստիճանը և տեխնիկայի պարզունակությունը մարդուն նաև կախման մեջ էին ապահովում բնությունից, նրան շրջապատող աշխարհագրական պայմաններից: Հայտնի է, որ թույլ զարգացած և անբարենպաստ բնակլիմայական պայմաններում գտնվող հասարակության կողմից բավարար քանակությամբ կենսամթերքների արտադրությունը, բնակարանային ու արտադրական կառույցների շինարարությունը, բուսակալական ուժեղման, օտար ասպատակությունների և բնության տարերքների դեմ պայքարելը անհնարին կլինեք առանց համայնքի անդամների և ընտանիքների կոլեկտիվ, փոխադարձ օգնության կազմակերպման: Առանց դրան Աղձնիքը չէր կարող տոկալ գոյություն համար մղվող դաժան պայքարում: «Մասունը իր մեջ պարունակում է բնության հարստություններ, որոնց ձեռք բերելը, մարդկային ապրուստին ծառայեցնելը՝ ըստ մեծի մասի կատարվում է միայն աշխատանքով և այն էլ՝ մեծ, աննկարագրելի ծանր աշխատանքով: Եվ դա մի այնպիսի աշխատանք է, որ մի անգամ գործադրվեց՝ ու վերջացավ, դա մի տաճար, մի կամուրջ, մի բուրդ շինել է, տր մի անգամ կատարվեց և երկար տարիների համար ծառայեց: Դա մշտական, սովորական գործունեություն է, անբուն հսկողություն, անդադար խնամք, որոնց պակասության, որոնց բացակայության միջոցին կորչում է այդ երկրի բազմազան արդունաբերությունը³³: Կ. Մարքսը, աշխատանքային այդպիսի կոոպերացիաների կազմակերպմանը մեծ նշանակություն տալով, գրում է. «Կոմբինացված աշխատանքի արդյունքը նման բոլոր դեպքերում կամ բոլորովին չի կարող

ստացվել մեկ անհատի ջանքերով, կամ կարող է իրագործվել միայն շատ ավելի հրկար ժամանակամիջոցում, կամ միայն գաճաճային մասշտաբով»³⁴:

Իսկապես, հսկայական է եղել փոխօգնության դերը հայ գյուղացիության և մասնավորապես լեռնային Աղձնիքի արտադրական կայանքում: Այդ պատճառով էլ ազգակցական կապերը հարևանական հարաբերությունների հետ հաճախ հանդես էին գալիս միահյուսված ձևով:

Ազգակցական հարաբերությունների արտահայտման աստիճանը պայմանավորված էր տեղյալ շրջանի կոնկրետ պատմական և քաղաքական պայմաններով: Աղձնիքում, հատկապես նրա լեռնային շրջաններում, ավանդական կերպով պահպանվում էր ազգովի թաղերով ապրելու սովորույթը: Սասունում և Խոփում ազգովի միատեղ բնակվելու մասին ուշագրավ նկարագրություն է թողել Թ. Արծրունին. «Եւ բնակեն առ անձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թէ ոք չարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ՝ հագիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբին ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելու կարծիս բերելով...»³⁵:

Մեր դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես վերոհիշյալ, այնպես էլ Աղձնիքի տարածքի շատ շրջաններում բնակվածության այդ սովորույթը էական փոփոխությունների չի ենթարկվել, թեև հովտային շրջաններում գերդաստանների տրոհման հետևանքով առաջացած մերձավոր ազգականների կցատները վերածվել էին կցաթաղերի³⁶: «Շարևան ընտանիքները,— նշում է Վ. Պետոյանը,— ընդհանրապես արյունակիցներ էին, տրովհետև գյուղերի և հողերի իրարից ցրված լինելու համար ամեն մի գյուղի կամ թաղի և հողամասի վրա տեղավորված էին գերդաստաններից գոյացած հարևաններ: Այնուամենայնիվ, այդ հարևանների մեջ երբեմն այս կամ այն պատճառով կային և ոչ արյունակից դրացիներ»³⁷: Իսկ այդ նշանակում էր, որ Աղձնիքի՝ հատկապես լեռնային և նախալեռնային շրջաններում հողամշակման, բերքահավաքի ու կալսոցի ընկերությունները, անասնակերի կրտսերման ու տեղափոխման, շինարարական և այլ աշխատանքների համար կազմակերպվող ընկերությունները հիմնականում կազմակերպվում էին ազգակցական սկզբունքով: Ազգագրագետ է. Կարապետյանը քննարկելով համահայկական համամասն ազգագրական նյութերը, հանգել է այն եզրակացության, որ «տնտեսական փոխօգնության ձևերը՝ ինչպես հողի մշակութային, այնպես էլ անասունների արածեցման ընկերությունների կազմակերպումը իրագործվում էր հիմնականում հարևանական-տերիտորիալ սկզբունքով, սակայն ազգակցական հարաբերությունների պահպանման հետևանքով այդ ընկերությունները հաճախ համընկնում էին ազգակցական խմբերի հետ»³⁸:

Ազգի ընտանիքների կողմից կոնկրետիվ հողամշակման ձևը հաստատում է ազգ-արեւնակցական խմբի ամենավաղ շրջանին բնորոշ միասնական հողօգտագործման և հողատիրության վերապրուկները պատմական ոչ շատ վաղ անցյալում գոյություն ունենալու մասին: Այդ մասին է վկայում նաև ազգակից ընտանիքների հողերի կից լինելը, մի երևույթ, որը չէր խախտվել անգամ Աղձնիքի հովտային շրջաններում, որտեղ ազգակցական թաղերը վերածվել էին հարևանական կցաթաղերի:

Ազգ-արեւնակցական խումբը ավելի նախալեռնայալ պատմական ձև է, քան գյուղական կամ հարևանական համայնքը: Վերջինիս առաջացումը վերաբերում է նախնադարյան համայնական հասարակության քաջքայման փուլին, երբ արտադրական կապերի ուժեղացման շնորհիվ համայնքի միավորման և համախմբման գործում հետին պլան է մղվում ազգակցական կապերի դերը, երբ ազգակցական կապերը խոր քաջքայմ էին ապրում, մի հանգամանք, որը պատճառ է դառնում գյուղական համայնքի առաջացման և հարևանական հարաբերությունների զարգացման: «Ամենից առաջ,— գրել է Կ. Մարքսը,— բոլոր ավելի վաղ նախնադարյան համայնքները հանգում էին իրենց անդամների արյունակցական կապերի վրա: Խղելով այդ ուժեղ, բայց նեղ կապերը, գյուղական համայնքն ընդունակ է ավելի ընդլայնվելու և դիմանալու օտարների հետ ունեցած շփմանը»³⁹: Սակայն իր անդամների արտադրական և տերիտորիալ-տնտեսական կապերի վրա խարսխված գյուղական համայնքը ներքին կառուցվածքով, իրավունքներով և պարտավորություններով տարբերվում էր նախավանդ, միայն արյունակցական ազգակցական կապերի վրա խարսխված նահապետական համայնքներից: Դրա համար էլ հարևանական համայնքները Կ. Մարքսը կոչել է «ազատ մարդկանց սոցիալական առաջին միավորումներ, որոնք կապված չեն արյունակցական կապերով»⁴⁰:

Չնայած դրան, գյուղական համայնքն իր նախորդից ժառանգել էր այնպիսի գծեր, որոնք դրել էին իրենց կնիքը գյուղական համայնքի անդամների փոխհարաբերությունների վրա: Գյուղական համայնքի ներսում, նրա անդամների փոխհարաբերություններում, չնայած գույքային շերտավորմանն ու սոցիալական անհավասարությանը, պահպանվում էին տոհմային կարգե-

րից ժառանգված փոխօգնությունը և համերաշխությունը վերաբերող մի շարք սովորույթներ: Գյուղական համայնքի արտադրական հարաբերությունների մակարդակն այնպիսին էր, որ բերում էր նրա անդամների շահերի միահյուսմանը՝ աշխատանքի ընթացքում անբու կապին, համերաշխություն որոշ կանոնների պահպանմանը:

¹ Տեղափոխությունը կատարվում էր հետևյալ կերպ. գերանների վրա 2—5 տեղով (նայած գերանի մեծությանը) պարանով խաշած կապում էին մոտ 4 մետր երկարություն ունեցող խոսա կոշվող ձողեր, իսկ վերջիններիս վրա գերանից մեկ մետր հեռավորությամբ՝ բուրգա կոշվող ձողեր: Յուրաքանչյուր խոսայի տակ մտնում էին 4 կամ 8 մարդ, իսկ ամբողջ գերանը տեղափոխվում էր 16—40 հոգով: Գերանների ծայրերին կապվում էին ճոպաններ՝ անվտանգությունն ապահովելու՝ վայրէջքների զսպելու և վերելքների ձգելու նպատակով (Ռ. Նահապետյան, Դատային ազգագրական նյութեր, № 7, էջ 247—248; Այսուհետև՝ ԴԱՆ: Նյութերը պահվում են ԵՊՀ Ն. Մառի անվան հնագիտության և ազգագրության կաբինետում): Գերանատարություն այս կլասիկ օրինակն էլ ազգագրագետ Վ. Բղոյանին հանգեցրել է այն համոզման, թե «միջնադարում հայերը սեփական ուղղման բաբաններ են ունեցել» (Վ. Բղոյան, Տեղափոխման մոտացված ձևեր, «Լրաբեր հաս. գիտ.», 1972, № 10): Հողվածի նկարները մեզ է տրամադրել Վ. Բղոյանը:

² Վ. Պետոյան, Սասունի ազգագրությունը, Երևան, 1965, էջ 190—191:

³ ԴԱՆ, № 7, 247—248, № 8, էջ 43:

⁴ ԴԱՆ, № 8, էջ 48:

⁵ ԴԱՆ, № 7, էջ 245:

⁶ ԴԱՆ, № 8, էջ 28, 43:

⁷ Տե՛ս Գ. Հալալյան, Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պրակ 3, 1973, էջ 119—120:

⁸ ԴԱՆ, № 7, էջ 248:

⁹ Ե. Կարապետյան, Սասուն (ազգագրական նյութեր), Երևան, 1963, էջ 51:

¹⁰ ԴԱՆ, № 8, էջ 45:

¹¹ А. Робакидзе, Супруги как одна из форм эксплуатации в дореволюционной Грузии, «Мимомхипвели», том II, 1951, с. 409, 418 (վրաց. լեզվով): Т. А. Чиковани, Формы взаимопомощи у цапкских урумов, «Кавказский этнографический сборник», Тбилиси, 1972, с. 92.

¹² Լ. Խաչիկյան, 14—15-րդ դդ. հայկական գյուղական համայնքի մասին, էջ 127:

¹³ Այդ մասին ուշագրավ տեղեկությունները տե՛ս Ռ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 202—203:

¹⁴ Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 82: (Հմմտ., Ե. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 12):

¹⁵ ԴԱՆ, № 12, էջ 78, № 8, էջ 50:

¹⁶ ԴԱՆ № 13, էջ 9, 73: Տե՛ս նաև Տիգրան Մկուռ, Ամիտայի արձագանքները, Ուիհօթն Նիւ ճերզի, 1950, էջ 11:

¹⁷ Ռ. Նահապետյան, Աղձնիք (պատմա-ազգագրական ակնարկ), Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Երևան, 1974, էջ 164—174, տախ. 1, 2:

¹⁸ ԴԱՆ, № 7, էջ 230, 251, № 6, էջ 61, № 7, էջ 274:

¹⁹ Տե՛ս Ռ. Նահապետյան, Աղձնիք (պատմա-ազգագրական ակնարկ) հողվածը նշված տեղում, էջ 169:

²⁰ ԴԱՆ, № 12, էջ 116—117:

²¹ Նման սովորույթը պահպանվում էր նաև Աղձնիքի նփրկերտ գավառի շրջակա վայրերում (տես Ռ. Ժամկոչյան, Հայնի, Պելլուսթ, 1972, էջ 72):

²² ԴԱՆ, № 7, էջ 270—271:

²³ Նույն տեղում, էջ 249, 273—274:

²⁴ Տե՛ս Գ. Հալալյան, Դերսիմի հայերի ազգագրությունը, էջ 119—120, Վ. Թեմուրեյան, Գամիրքի հայերը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», 1970, պրակ 1, էջ 129:

²⁵ ԴԱՆ, № 7, էջ 272—273, № 12, էջ 107:

²⁶ Նյութերը հաղորդեցին Աշտարակի շրջանի Լեոնարոտ գյուղում Դանիել Գրիգորյանը, Արշակ Առաքելյանը և Արշակ Ներսիսյանը (ԴԱՆ, № 7, էջ 237—239):

²⁷ Կարլ Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 343:

- ²⁸ Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 204:
- ²⁹ ԴԱՆ, № 7, էջք 241—243:
- ³⁰ ԴԱՆ, № 8, էջ 44:
- ³¹ Տէս Մ. Միջախոյաճն, նկարագրական ուղևորութիւնն ի հայաբնակ գաղառս Արևելյան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1896, մասն Գ, էջք 213—214:
- ³² ԴԱՆ, № 6, էջ 64, № 12, էջ 106:
- ³³ Ա. Քալաթբար, Սասուն, Թիֆլիս, 1895, էջ 33:
- ³⁴ Կարլ Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 346:
- ³⁵ Թովմա Արծրունի, նշվ. աշխ., էջ 203:
- ³⁶ ԴԱՆ, № 6, էջք 78—81, 157—213, № 12, էջք 4, 19—20:
- ³⁷ Վ. Պետրոյան, նշվ. աշխ., էջ 230:
- ³⁸ Э. Карапетян, Родственная группа «азг» у армян, с. 95.
- ³⁹ Маркс К. и Энгельс Ф., Сочинения, т. XXVII, с. 680—691, 694—695.
- ⁴⁰ Նույն տեղում, էջ 694:

Р. А. НАГАПЕТАН, Пережитки форм родственной и общинной взаимопомощи среди армян Алдзника.—Пережитки форм родственной и общинной взаимопомощи между армянами Алдзникской области исторической Армении сохранились до конца XIX и начала XX века. На основе полевых этнографических материалов, собранных автором статьи в среде алдзникских армян, освещаются формы и принципы организации взаимопомощи при землеобработке, сборе урожая, молотье, сборе и перевозке кормов, а также жилищном строительстве.